# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ
համայնք, Գ.ԱՐՋՈՒՏ, Հեռ. 093 19 91 34 ,
arjut.lori@mta.gov.am


N ԳԱ76
*26 ապրիլ 2018թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ղեկավարի թիվ 24-27 որոշումները:

26.04.2018

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

*Կատ.`*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

18.04.2018թ. թիվ 24-Ա

ՈՐՈՇՈՒՄ

06-019-003-002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Տարոն Երվանդի Ափինյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 28.08.1991թ թիվ 2 որոշումը, մասնագիտական որակավորում ստացած չափագրողի կողմից կազմված հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքը՝

Որոշում եմ՝

1.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-019-003-002 ծածկագրի տակ գտնվող 0.14831 հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում կառուցված 287.61հա բնակելի շինությունների, որից պարիսպ՝ 11.51քմ, մառան՝ 30.74քմ և տուն՝ 245.36քմ, նկատմամբ Տարոն Երվանդի Ափինյանի սեփականության իրավունքը՝ ժառանգության օրենքի ուժով:
2.Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ:
3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

19.04.2018թ. թիվ 25-Ն

# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի՝

Որոշում եմ՝

ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի 2018 թվականի բյուջեի գործառնական դասակարգման ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝ բաժին 1, խումբ 1, կարգ 1, 2241 հոդվածով նախատեսված միջոցներից 20000 /քսան հազար/ դրամ երկրորդ եռամսյակից տեղափոխել երրորդ եռամսյակ, և բաժին 1, խումբ 1, կարգ 1, 2264 հոդվածով նախատեսված միջոցներից 20000 /քսան հազար/ դրամ երրորդ եռամսյակից տեղափոխել երկրորդ եռամսյակ:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՋՈՒՏ ... 07300557

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N26-Ա

« 23 » ապրիլի 2018 թվականի

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29/12/2005 թվականի N 2393-Ն որոշմամբ, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ, 66-րդ հոդվածներով, ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 43 հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29/12/2005թ. թիվ 2387-Ն որոշումը

Որոշում եմ

1. Հաշվի առնելով այն հանգամանքը , որ ՀՀ կառավարության 29/12/2005 թվականի N 2393-Ն որոշմամբ Արջուտ համայնքում գտնվող և Լուսինե Սամվելի Աֆինյանին վարձակալության իրավունքով մինչև 25/10/2094 թվականը տրամադրված 0.17 հա հողամասից 0.11093 հա հողամասը ընդգրկված է սեփականության իրավունքով համայնքին փոխանցված հողամասի 5–րդ հավելվածի ցանկով 106-019-01 ծածկագրով 3.29 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամասի մեջ , ճանաչել Արջուտ համայնքի սեփականության իրավունքը 0.11093 հա հողամասի նկատմամբ, հետագայում վարձակալ Լուսինե Աֆինյանին օտարելու համար:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ չի առաջացնում սերվիտուտ:
3. Սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման ԱԳ Կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Վ. Մկրտչյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ու Մ N27-Ա

**« 23 » ապրիլի 2018 թվականի**

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29/12/2005 թվականի N 2393-Ն որոշմամբ, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ, 66-րդ հոդվածներով, ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 43 հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29/12/2005թ. թիվ 2387-Ն որոշումը

Որոշում եմ

1. Հաշվի առնելով այն հանգամանքը , որ ՀՀ կառավարության 29/12/2005 թվականի N 2393-Ն որոշմամբ Արջուտ համայնքում գտնվող և Լուսինե Սամվելի Ափինյանին վարձակալության իրավունքով մինչև 25/10/2094 թվականը տրամադրված 0.17 հա հողամասից 0.05907 հա հողամասը ընդգրկված է 6 հավելվածի ցանկում՝ 106-018 ծածկագրով որպես բնակավայրերի հասարակական գործառնական նշանակության հողամաս /ճաշարան/ /, որոնք մասնավորեցման ենթակա հողամասեր են , ճանաչել Արջուտ համայնքի սեփականության իրավունքը 0.05907 հա բնակավայրերի հասարակական հողամասի նկատմամբ, հետագայում վարձակալ Լուսինե Ափինյանին օտարելու համար:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ չի առաջացնում սերվիտուտ:
3. 0.05907 հա հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Արջուտ համայնք , 38 փողոց, թիվ 12. հողամաս:
4. Սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման ԱԳ Կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**Համայնքի ղեկավար՝ Վ. Մկրտչյան**